



*«Երևան քաղաքում բնակվող հաշմանդամների՝ պետության կողմից  
երաշխավորված անվճար բուժօգնություն ու սպասարկում ստանալու  
իրավունքի իրացման ուսումնասիրմանն» ուղղված սոցիոլոգիական  
հետազոտության*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպություն՝ «ՈՒՆԻՍՈՆ» ՀԿ

Ծրագիր՝ «Հաշմանդամություն ունեցող երևանցիների  
իրավունքների պաշտպանություն»

Սոցիոլոգ՝ Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....	3
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	4
3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	5
4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	5
5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	18

## ՀԱՎԵԼՎԱԾ

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպության միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին (հեղինակներին)՝ «Ունիսոն» հասարակական կազմակերպությանը պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:



# 1. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ առողջապահության ոլորտի կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում անվճար բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի մեջ են մտնում նաև 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամները, հաշմանդամ երեխաները (մինչև 18 տարեկան), ինչպես նաև հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաները (մինչև 18 տարեկան):

Վերոնշյալ իրավունքն ամրագրված է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և պարունակում է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները:<sup>1</sup>

Հաշմանդամների սոցիալական պաշտպանությունը ենթադրում է տնտեսական, սոցիալական և իրավական միջոցառումների համակարգ, որը հաշմանդամների համար ապահովում է կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու, փոխարինելու (փոխհատուցելու) պայմաններ և ուղղված է հասարակական կյանքում նրանց մասնակցության համար մյուս քաղաքացիներին համարժեք հնարավորությունների ապահովմանը: Այս միջոցառումների համակարգում կարևոր է տեղ է գրավում «Բժշկական վերականգնումը» (Հոդված 8): Վերջինս հանդիսանում է տարբեր հիվանդությունների, վնասվածքների, ֆիզիկական և մտավոր և այլ խանգարումների բուժման միջոցառումների համակարգ՝ հաշմանդամության հանգեցրած խեղումների և հիվանդությունների զարգացումն ու ծանրացումը կանխելու նպատակով:

Բժշկական վերականգնումը ներառում է վերականգնողական բուժումը, վերակառուցողական վիրաբուժությունը, պրոթեզաօրթոպեդիկ օգնությունը, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովումը, որոնք իրականացվում են հիվանդանոցային, ամբուլատոր կամ

<sup>1</sup> Օրենքն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 14 ապրիլի 1993թ. (Հ.Ն-0800-Մ), հետագայում ենթարկվել է փոփոխությունների:

առողջարանային բուժման միջոցով՝ ՀՀ առողջապահության նախարարության համակարգի մարմինների, գերատեսչական, ապահովագրական, բարեգործական և այլ բուժական հիմնարկների կողմից:

Վերոնշյալ օրենքի Հոդված 11-ով սահմանվում է հաշմանդամների բժշկական և առողջարանային սպասարկումը, որը հաշմանդամներին երաշխավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին որակյալ անվճար բժշկական օգնություն պետական բժշկական հիմնարկներում:

1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաները ըստ դեղատոմսերի ապահովվում են դեղորայքով անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս գեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից:

Հաշմանդամները իրավունք ունեն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում և դեղատներում առաջնահերթ կարգով ապահովվելու սպասարկմամբ:

Չնայած վերոնշյալ օրենքի ընդունմանը, ինչպես շատ այլ օրենքների դեպքում, միշտ չէ որ ամրագրված դրույթները իրենց օբյեկտիվ կիրառությունն են գտնում պրակտիկայում, միշտ չէ, որ պետական գործադիր մարմինները կարողանում են ապահովել դրանց իրագործումը:

Տվյալ հետազոտությունը նախաձեռնվել է «Ունիտոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող երևանցիների իրավունքների պաշտպանություն» ծրագրի շրջանակներում՝ նպատակ ունենալով վերհանել և ուսունասիրել վերոնշյալ խնդիրները:

## **2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հետազոտության նպատակն է պարզել, թե որքանով է ՀՀ առողջապահության ոլորտի կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում անվճար բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու իրավունքը իրացվում Երևան քաղաքում բնակվող հաշմանդամների նկատմամբ:

Այսպիսով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Պարզել, թե որքանով են Երևանում բնակվող հաշմանդամները տեղեկացված իրենց հասանելիք առողջապահական արտոնությունների մասին և որքանով են օգտվում այդ արտոնություններից չորս մակարդակում. բուժում պոլիկլինիկայում, ամբուլատոր բուժում, ստացիոնար բուժում, անվճար դեղորայքի ստացում,

- Պարզել, թե ինչպես են Երևանում բնակվող հաշմանդամները գնահատում այդ արտոնությունների շրջանակներում մատուցվող առողջապահական ծառայությունները առաջադրված 2 ասպեկտով. մասնագիտական արդյունավետություն և բուժանձնակազմի վերաբերմունք:

### 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության նպատակին հասնելու համար իրականացվել է հեռախոսային հարցում Երևան քաղաքում ապրող հաշմանդամների շրջանում:

Հարցումն իրականացվել է ըստ մի քանի ասպեկտների (բլոկների).

- Տեղեկացվածություն առողջապահական արտոնությունների մասին
- Բուժում պոլիկլինիկայում
- Ամբուլատոր բուժում
- Ստացիոնար բուժում
- Անվճար դեղորայքի ստացում

#### Հետազոտության ընտրանքը

Հեռախոսային հարցման են ենթարկվել Երևանում ապրող 391 հաշմանդամներ: Ընտրանքային համախմբությունը կազմելու համար կիրառվել է հետևյալ բանաձևը՝

$$n = \frac{K^2 S^2 N}{\Delta^2 N + K^2 S^2}, \text{ որտեղ՝}$$

N-ը գլխավոր համակցության ծավալն է, որը կազմում է 70.000:

K-ն<sup>a</sup> P հավանականությունից կախված գործակից է, որը P=0.05 պայմաններում K=1.96,

Δ=0.05, այսինքն՝ ընտրանքի սահմանային սխալը վերցվում է 5%;

S =0.25, այսինքն՝ մաքսիմալ դիսպերսիան<sup>a</sup> S<sup>2</sup>=0.0625

Հարցվողների ընտրությունը կատարվել է Երևանում բնակվող հաշմանդամների տվյալների շտեմարանից՝ պատահական ընտրանքի մեթոդով:


### 4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքների վերլուծությունը կներկայացվի ըստ հարցաթերթում առանձնացված բաժինների և տոկոսներով:

**Ա. ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Այն հարցին, թե որքանով են տեղեկացված իրենց հասանելիք առողջապահական արտոնությունների մասին, հաշմանդամների պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. հաշմանդամների 51%-ը բոլորովին տեղեկացված չէ իրեն հասանելիք առողջապահական արտոնությունների մասին, 39,5%-ը մասամբ է տեղեկացված, և միայն 7,4%-ը գտնում են, որ իրենք լիովին տեղեկացված են իրենց իրավույթների մասին (տե՛ս գծապատկեր 1):

**Գծապատկեր 1.**



Ստորև ներկայացվում է հաշմանդամների տեղեկացվածության մակարդակն ըստ տարիքային խմբերի. (տե՛ս աղյուսակ 1):

**Աղյուսակ 1.**

		Հարցվողների տարիքային խմբերը				
		մինչև 18 տ.	19-35 տ.	36-55 տ.	56 և ավելի տ.	
<b>Հաշմանդամների տեղեկացվածությունն իրենց հասանելիք արտոնությունների մասին</b>	այո, լիովին տեղեկացված եմ	Քանակը	3	14	9	3
		%	10.3%	48.3%	31.0%	10.3%
	մասամբ եմ տեղեկացված	Քանակը	10	71	45	28
		%	6.5%	46.1%	29.2%	18.2%
	բոլորովին տեղեկացված չեմ	Քանակը	20	79	51	49
		%	10.1%	39.7%	25.6%	24.6%
	դժվ.պատ.	Քանակը	2	2	3	1
		%	25.0%	25.0%	37.5%	12.5%

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, *մինչև 18* և *56 և ավելի տարիքային խմբերի* մոտ տեղեկացվածության մակարդակը հասանելիք առողջապահական արտոնությունների մասին ավելի ցածր է, քան միջին տարիքային խմբերի մոտ, միաժամանակ բոլորովին չտեղեկացվածների տոկոսը միջին տարիքային խմբերի մոտ ավելի բարձր է:

Պարզելու համար, թե որքանով է հաշմանդամների տեղեկատվությունը համապատասխանում իրականությանը, հարցվողներին խնդրվել է թվարկել այն արտոնությունները, որոնք, ըստ իրենց, ունեն հաշմանդամները. (տե՛ս աղյուսակ 2): Արդյունքներից երևում է, որ հարցվողների 49,4%-ը տեղյակ են հաշմանդամներին հասանելիք բուժճառայությունների անվճար/զեղչով լինելու և անվճար դեղորայքի տրամադրման մասին, 26,4%-ը տեղյակ է միայն բուժճառայությունների անվճար/զեղչով լինելու, 8%-ը՝ անվճար դեղորայքի տրամադրման մասին, միայն 0,6%-ն է տեղեկացված անվճար ստոմատոլոգիական ճառայությունների և խնամակալի ճառայության մասին, և ընդամենը 2,3%-ն է տեղյակ վերոնշյալ արտոնությունների ամբողջական ցանկի մասին, իսկ հաշմանդամների 1,1%-ը գտնում է, որ ընդհանրապես արտոնություններ չունի:

Վերոնշյալ արդյունքներից կարելի է եզրակացնել, որ հաշմանդամների տեղեկատվությունն իրենց հասանելիք արտոնությունների մասին կրում է ոչ ամբողջական, տարերային, և չհամակարգված բնույթ:


**Աղյուսակ 2.**

		Տոկոսներով
<b>Ինչպիսի արտոնություններ ունեն հաշմանդամներն ըստ հարցվողների</b>	պոլիկլինիկայի, հիվանդանոցների ճառայությունները անվճար են կամ զեղչով	26.4
	անվճար առողջարանների ուղեգիր է տրամադրվում	4.0
	վիրահատությունները անվճար կամ զեղչով են	3.4
	անվճար դեղորայք է տրամադրվում	8.0
	արտոնություններ չունենք	1.1
	անվճար ստոմատոլոգիական ճառայություններ են տրամադրվում	0.6
	պոլիկլինիկայի, հիվանդանոցների ճառայությունները անվճար են կամ զեղչով, անվճար առողջարանների ուղեգիր է տրամադրվում, վիրահատությունները անվճար կամ զեղչով են, անվճար դեղորայք է տրամադրվում	2.3

	պոլիկլինիկայի, հիվանդանոցների ծառայությունները անվճար են կամ զեղչով, անվճար դեղորայք է տրամադրվում	49.4
	ինամակալի ծառայություն	0.6
	խոլիկլինիկայի, հիվանդանոցների ծառայությունները անվճար են կամ զեղչով, անվճար ստոմատոլոգիական ծառայություններ են տրամադրվում	0.6
	անվճար առողջարանների ուղեգիր է տրամադրվում , անվճար դեղորայք է տրամադրվում	0.6
	դժվ.պատ.	2.9

**Բ. ԲՈՒԺՈՒՄ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅՈՒՄ**

**Գծապատկեր 2.**



Հարցման ենթարկված հաշմանդամների 47%-ը դիմել է պոլիկլինիկա վերջին երկու տարում, իսկ 53%-ը՝ ոչ:

Աղյուսակ 3-ում ներկայացված են հաշմանդամների կարծիքներն այն մասին, թե արդյոք այցելությունը պոլիկլինիկա նպաստել է իրենց առողջական վիճակի բարելավմանը, թե ոչ:

Աղյուսակից երևում է, որ հաշմանդամների միայն 24.2%-ն է գտնում, որ այցելությունը պոլիկլինիկա բացասական ազդեցություն է ունեցել իրենց առողջական վիճակի վրա:




### Աղյուսակ 3.

		Տոկոսներով
<b>Արդյոք բուժումը պոլիկլինիկայում նպաստել է</b>	այո	19.0
	ավելի շուտ այո	35.1
	ավելի շուտ ոչ	18.0
	ոչ	24.2
	դժվ.պատ.	3.8

Հաշմանդամներին խնդրվել է նաև գնահատել պոլիկլինիկայի բուժանձնակազմի վերաբերմունքն իրենց նկատմամբ (հարգալից վերաբերմունք, մանրակրկիտ զննում, քաջքշուկների մեջ չզցելը). (տե՛ս գծապատկեր 3):

### Գծապատկեր 3.



Ինչպես երևում է գծ. 3-ից, հաշմանդամների մեծամասնությունը գոհ է պոլիկլինիկայի բուժանձնակազմի վերաբերմունքից, մասնավորապես նրանց 16.6%-ն այն գնահատում է գերազանց, 44.5%-ը՝ լավ, 28%-ը՝ բավարար, և միայն 10.4%-ը՝ վատ:


Հաշմանդամների 10.0%-ը պնդում է, որ կատարել է հավելյալ մուծումներ պոլիկլինիկայում. (տե՛ս աղյուսակ 4):

**Աղյուսակ 4.**

		Տոկոսներով
<b>Ինչի համար է վճարել պոլիկիինիկայում</b>	անկետա բացելու համար	13.0
	խորհրդատվության համար	52.2
	լաբորատոր անալիզների համար	34.8

**Գ. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՈՒՄ**

**Գծապատկեր 4.**




Աղյուսակ 5-ում ներկայացված են հաշմանդամների կարծիքներն այն մասին, թե արդյոք ամբուլատոր այցելությունը նպաստել է իրենց առողջական վիճակի բարելավմանը, թե ոչ:

**Աղյուսակ 5.**

		Տոկոսներով
<b>Արդյոք ամբուլատոր բուժումը նպաստել է</b>	այո	27.7
	ավելի շուտ այո	40.2
	ավելի շուտ ոչ	8.9
	ոչ	18.8
	դժվ.պատ.	4.5

Ամբուլատոր բուժանձնակազմի վերաբերմունքի գնահատումը հաշմանդամների կողմից ներկայացված է գծապատկեր 5-ում:

**Գծապատկեր 5.**



Ամբուլատոր բուժանձնակազմի դեպքում նույնպես հաշմանդամների գնահատականներն ընդհանուր առմամբ դրական են, մասնավորապես նրանց 22.5%-ն այն գնահատում է գերազանց, 46.8%-ը՝ լավ, 21.6%-ը՝ բավարար, և միայն 9%-ը՝ վատ:

Ամբուլատոր այցելություն կատարած հաշմանդամների 29.5%-ը պնդում է, որ կատարել է հավելյալ մոծումներ. (տե՛ս աղյուսակ 6):


Ամբուլատոր այցելության ժամանակ հաշմանդամները հիմնականում վճարել են սարքավորումներով զննման (34.3%), խորհրդատվության (22.9%) և լաբորատոր անալիզների համար (14.3%):

**Աղյուսակ 6.**

		Տոկոսներով
<b>Ինչի համար են վճարել հաշմանդամները ամբուլատոր այցելության ժամանակ</b>	գեղջեր չեն արվել, զննման համար վճարել է ամբողջությամբ	8.6
	խորհրդատվության համար	22.9
	սրսկումների, սիստեմա միացնելու համար	8.6
	սարքավորումներով զննման համար	34.3
	լաբորատոր անալիզների համար	14.3
	բուժքույրերի ծառայությունների համար	5.7
	այլ	5.7


**Դ. ՄՏԱՑԻՈՆԱԲ ԲՈՒԺՈՒՄ**

**Գծապատկեր 6.**



Վերջին երկու տարում ստացիոնար բուժհաստատություններ են դիմել հաշմանդամների 23%-ը, ընդ որում նրանց 76%-ն օգտվել է վճարովի համակարգից, իսկ 24%-ը սպասարկվել է պետպատվերի շրջանակներում:

**Գծապատկեր 7.**



Պետպատվերի շրջանակներում սպասարկված հաշմանդամները գնահատել են ստացիոնար բուժման ազդեցությունն իրենց առողջական վիճակի բարելավման վրա:


**Աղյուսակ 7.**

		Տոկոսներով
Արդյոք ստացիոնար բուժումը նպաստել է	այո	32.9
	ավելի շուտ այո	38.6
	ավելի շուտ ոչ	11.4
	ոչ	15.7
	դժվ.պատ.	1.4

Ինչպես երևում է աղյուսակ 7-ից, պետպատվերի համակարգից օգտվողների մեծամասնությունը գտնում է, որ իրենց առողջությունը բարելավվել է ստացիոնար բուժումից հետո, մինչև 15.7%-ն այն կարծիքին է, որ պեպատվերով սպասարկումը որևէ դրական ազդեցություն չի ունեցել իրենց առողջական վիճակի վրա:

Ինչ վերաբերում է ստացիոնար բուժանձնակազմի վերաբերմունքի գնահատմանը, ապա հաշմանդամների մեծամասնությունն (43.5%) այն գնահատում է գերազանց, 27.5%-ը՝ լավ, 17.4 %-ը՝ բավարար, իսկ 11.6%-ը՝ վատ:

**Գծապատկեր 8.**




Աղյուսակ 8-ում ներկայացված են հաշմանդամների կողմից վճարովի համակարգին դիմելու հիմնական պատճառները: Վերջիններիս մեջ առաջնային տեղ է գրավում այն, որ հաշմանդամներին բուժհաստատությունում հավաստիացրել են, որ իրենց այդպիսի ծառայություն չի հասնում (22.7%), այնուհետ՝ հավասարապես անվստահությունը պեպատվերի շրջանակներում իրականացվող բուժման որակի նկատմամբ, բուժանձնակազմի խտրական վերաբերմունքը, վճարովի համակարգով սպասարկվելու դեպքում պայմանների ավելի լավը լինելը (18.2%):

**Աղյուսակ 8.**

		Տոկոսներով
<b>Վճարովի համակարգին դիմելու պատճառները</b>	չի վստահում պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժման որակին, նախընտրում է վճարել	18.2
	բուժանձնակազմի վերաբերմունքը խտրական է պետպատվերով սպասարկվող հիվանդների նկատմամբ	18.2
	վճարովի համակարգով սպասարկվելու դեպքում պայմաններն ավելի լավն են	18.2
	պետպատվերի ձևակերպումը երկար է տևում, քաջքշուկները շատ են	4.5
	պետպատվերի դեպքում բյուլետեն չի տրվում	4.5
	պետպատվերի դեպքում միևնույն է վճարում ես	4.5
	դիմելիս հաշմանդամ չէր, չէր հասնում պետպատվեր	4.5
	հովանավորել են, որ բուժվի, դրա համար էլ վճարովի համակարգ են դիմել	4.5
	բուժհիմնարկում ասել են, որ չի հասնում պետպատվերով բուժում	22.7

**Ե. ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՍՏԱՑՈՒՄ**

**Գծապատկեր 9.**



Հաշմանդամների 47%-ը դիմել են իրենց հասանելիք անվճար դեղորայք ստանալու համար, իսկ 53%-ը՝ ոչ:

Աղյուսակ 9-ում ներկայացված են հաշմանդամների՝ անվճար դեղորայք ստանալու պայմանները:

**Աղյուսակ 9.**

		Տոկոսներով
<b>Ինչպես են ստացել դեղորայքը</b>	ստանում է կանոնավոր՝ ունենալով խրոնիկ հիվանդություն	18.6
	դիմել է կանոնավոր ստանալու համար, բայց ոչ միշտ է ստացել	5.9
	դիմել է կանոնավոր ստանալու համար, բայց երբեք չի ստացել	6.9
	դիմել է կանոնավոր ստանալու համար, սակայն երբեմն ստացել է փոխարինող դեղամիջոց	1.6
	դիմել է կանոնավոր ստանալու համար, բայց միշտ ստացել է փոխարինող դեղամիջոց	3.2
	դիմում և ստանում է պարբերաբար	8.0
	դիմել է պարբերաբար, բայց ոչ միշտ է ստացել	2.1
	դիմել է բարբերաբար, բայց երբեք չի ստացել	4.3
	դիմել է պարբերաբար, բայց երբեմն ստացել է փոխարինող դեղամիջոց	1.1
	դիմել է պարբերաբար, բայց միշտ ստացել է փոխարինող դեղամիջոց	1.6
	մեկ անգամ դիմել ու ստացել է	21.8
	դիմել է մեկ անգամ, սակայն ստացել է փոխարինող դեղամիջոց	3.7
	դիմել է մեկ անգամ, սակայն չի ստացել	19.7
այլ	1.6	

Աղյուսակ 10-ում ներկայացված են հաշմանդամների՝ իրենց հասանելիք անվճար դեղորայք ստանալու համար չդիմելու պատճառները, որոնցից առաջինը դրա անհրաժեշտության բացակայությունն է /50.5%/, հաջորդը՝ հավատի բացակայությունը առ այն, որ կարող են


անվճար դեղորայք ստանալ (24.3%), իսկ հաշմանդամների 17%-ն ուղղակի չգիտեին նման հնարավորության մասին:

**Աղյուսակ 10.**

		Տոկոսներով
<b>Ինչու չեն դիմել իրենց հասանելիք անվճար դեղորայքը ստանալու համար</b>	նման անհրաժեշտություն չի եղել	50.5
	չի հավատում, որ կարող է անվճար դեղորայք ստանալ	24.3
	չգիտեին նման հնարավորության մասին	17.0
	քաշքշուկները շատ են, դեղերի ստացումը ուշացնում են	4.4
	որակյալ, թանկարժեք դեղերը չեն տրվում, ասում են, որ բազայում չկա	1.5
	բժիշկները կոպիտ են վերաբերվում	2.4


**Ձ. ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

**Գծապատկեր 10.**






**Գծապատկեր 11.**



**Գծապատկեր 12.**



**Աղյուսակ 11.**

		Տոկոսներով
Հարցերին պատասխանողները	Հաշմանդամի մայր/հայր	26.7
	Հաշմանդամի քույր/եղբայր	3.3
	Հաշմանդամի որդի/դուստր	0.8
	Հաշմանդամի կին/ամուսին	5.1
	Հաշմանդամի այլ բարեկամ	2.8
	Հաշմանդամն ինքը	61.3

## 5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, Երևան քաղաքում բնակվող հաշմանդամների հետ հեռախոսային հարցման արդյունքներն ամփոփելով տեսնում ենք, որ.

- Հաշմանդամների 51%-ը բոլորովին տեղեկացված չէ իրեն հասանելիք առողջապահական արտոնությունների մասին,
- *մինչև 18 և 56 և ավելի տարիքային խմբերի* մոտ տեղեկացվածության մակարդակը հասանելիք առողջապահական արտոնությունների մասին ավելի ցածր է, քան միջին տարիքային խմբերի մոտ,
- Հաշմանդամների միայն 24.2%-ն է գտնում, որ այցելությունը պոլիկլինիկա բացասական ազդեցություն է ունեցել իրենց առողջական վիճակի վրա, մնացածն այդ ազդեցությունը գնահատել են գերազանց, լավ կամ բավարար,
- Հաշմանդամների մեծամասնությունը գոհ է պոլիկլինիկայի բուժանձնակազմի վերաբերմունքից, հաշմանդամների միայն 10.4%-ն գնահատել այն վատ, ամբուլատոր բուժանձնակազմի դեպքում նույնպես հաշմանդամների գնահատականներն ընդհանուր առմամբ դրական են,
- Ամբուլատոր այցելության ժամանակ հաշմանդամները հավելյալ մուծում են կատարել հիմնականում սարքավորումներով գնման (34.3%), խորհրդատվության (22.9%) և լաբորատոր անալիզների համար (14.3%),
- Վերջին երկու տարում ստացիոնար բուժհաստատություններ են դիմել հաշմանդամների 23%-ը, ընդ որում նրանց 76%-ն օգտվել է վճարովի համակարգից, իսկ 24%-ը սպասարկվել է պետպատվերի շրջանակներում,
- Հաշմանդամների մեծամասնությունը (43.5%) ստացիոնար բուժանձնակազմի վերաբերմունքը գնահատել է գերազանց, 27.5%-ը՝ լավ, 17.4 %-ը՝ բավարար, և միայն 11.6%-ը՝ վատ,
- Հաշմանդամների կողմից վճարովի համակարգին դիմելու հիմնական պատճառների մեջ առաջնային տեղ է գրավում այն, որ հաշմանդամներին բուժհաստատությունում հավաստիացրել են, որ իրենց այդպիսի ծառայություն չի հասնում (22.7%), այնուհետ՝ հավասարապես անվստահությունը պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժման որակի նկատմամբ, բուժանձնակազմի խտրական վերաբերմունքը, վճարովի համակարգով սպասարկվելու դեպքում պայմանների ավելի լավը լինելը (18.2%),

- Հաշմանդամների 47%-ը դիմել են իրենց հասանելիք անվճար դեղորայք ստանալու համար, իսկ 53%-ը՝ ոչ, ընդ որում հաշմանդամների՝ իրենց հասանելիք անվճար դեղորայք ստանալու համար չդիմելու պատճառներից առաջինը դրա անհրաժեշտության բացակայությունն է (50.5%), հաջորդը՝ հավատի բացակայությունը առ այն, որ կարող են անվճար դեղորայք ստանալ (24.3%), իսկ հաշմանդամների 17%-ն ուղղակի չգիտեին նման հնարավորության մասին:

Այսպիսով, ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ հաշմանդամների տեղեկատվությունն իրենց հասանելիք արտոնությունների մասին հիմնականում կրում է *ոչ ամբողջական, տարերային, և չհամակարգված բնույթ*, ինչն էլ հանդիսանում է հիմնական պատճառը նրանց հասանելիք առողջապահական արտոնությունների իրավունքի խախտման համար:

Հաշմանդամների՝ իրենց հասանելիք առողջապահական արտոնություններից չօգտվելու հաջորդ էական պատճառներն են հանդիսանում *անվստահությունը բուժաստատությունների նկատմամբ*, ինչպես նաև *բուժանձնակազմի խտրական վերաբերմունքը*:

**Հաշմանդամություն ունեցող անձանց հետ հեռախոսային հարցման հարցաթերթ N**

**Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ**

<p>1. Հարցվողի հաշմանդամության խումբը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Առաջին</li> <li>2. Երկրորդ</li> <li>3. Երրորդ</li> <li>4. Հաշմանդամ երեխա</li> </ol>	<p>2. Հարցվողի տարիքը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. մինչև 18 տ.</li> <li>2. 19 - 35</li> <li>3. 36-55</li> <li>4. 56 և ավելի</li> </ol>
---	--

3. Հարցվողի սեռը.      1. Իգական      2. Արական

4. Արդյո՞ք տեղյակ եք օրենքով Ձեր հաշմանդամության խմբին համապատասխան Ձեզ հասանելիք առողջապահական արտոնությունների մասին:

1. այո, լիովին տեղեկացված եմ
2. մասամբ եմ տեղեկացված
3. բոլորովին տեղեկացված չեմ (անցում հարց 6-ին )
4. Դժվ. պատասխանել (անցում հարց 6-ին )

5. Եթե այո, ապա որո՞նք են դրանք. ( **ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻՆ` ընդունել միայն 2 պատասխան՝ ըստ առաջնահերթության** )

**Բ. ԲՈՒԺՈՒՄ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅՈՒՄ (ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻՆ` լրացնել միայն վերջին այցելության մասով )**

6. Վերջին 2 տարում դիմե՞լ եք արդյոք պոլիկլինիկա .      1. այո      2. ոչ (անցում հարց 10-ին )

<p>7. Արդյո՞ք պոլիկլինիկայում Ձեզ նշանակված բուժումը նպաստել է Ձեր առողջական վիճակի բարելավմանը:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. այո</li> <li>2. ավելի շուտ այո</li> <li>3. ավելի շուտ ոչ</li> <li>4. ոչ</li> <li>5. Դժվ. պատ.</li> </ol>	<p>8. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք պոլիկլինիկայի բուժանձնակազմի վերաբերմունքը /հարգալից է, մանրամասն քննում է, ավելորդ քաշքշուկների մեջ չի գցում և այլն/ Ձեր նկատմամբ:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. գերազանց</li> <li>2. լավ</li> <li>3. բավարար</li> <li>4. վատ</li> <li>5. Դժվ. պատ.</li> </ol>
---	---

9. Արդյո՞ք պոլիկլինիկայում կատարել եք մուծում /ներ/.  
 1. այո (մանրամասնել) \_\_\_\_\_ 2. ոչ

**Գ. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՈՒՄ (ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻՆ` լրացնել միայն վերջին այցելության մասով )**

10. Վերջին 2 տարում դիմել եք արդյոք ամբուլատոր բուժման համար /խորհրդատվություն , ախտորոշում/:  
 1. այո      2. ոչ (անցում հարց 14-ին )

<p>11. Արդյո՞ք նշանակված բուժումը/ ստուգումը/ խորհրդատվությունը նպաստել է Ձեր առողջական վիճակի բարելավմանը:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. այո</li> <li>2. ավելի շուտ այո</li> <li>3. ավելի շուտ ոչ</li> <li>4. ոչ</li> <li>5. Դժվ. պատ.</li> </ol>	<p>12. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք բուժաստատության բուժանձնակազմի վերաբերմունքը /հարգալից է, մանրամասն քննում է, ավելորդ քաշքշուկների մեջ չի գցում և այլն/ Ձեր նկատմամբ:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. գերազանց</li> <li>2. լավ</li> <li>3. բավարար</li> <li>4. վատ</li> <li>5. Դժվ. պատ.</li> </ol>
--	--

13. Արդյո՞ք իրականացված խորհրդատվության կամ ախտորոշման համար կատարել եք մուծում /ներ/:  
 1. այո (մանրամասնել) \_\_\_\_\_ 2. ոչ

**Դ. ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՈՒՄ (ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻՆ՝ լրացնել միայն վերջին այցելության մասով )**

**14.** Վերջին 2 տարում դիմել էք արդյոք բուժհաստատություն ստացիոնար բուժման համար:

1. այո 2. ոչ (անցում հարց 19-ին )

**15.** Օգտվել եք. 1. պետպատվերի համակարգից 2. վճարովի համակարգից (անցում հարց 18-ին )

<p><b>16.</b> Արդյո՞ք նշանակված բուժումը նպաստել է Ձեր առողջական վիճակի բարելավմանը:</p> <p>1. այո 2. ավելի շուտ այո 3. ավելի շուտ ոչ 4. ոչ 5. Դժվ. պատ.</p>	<p><b>17.</b> Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք բուժհաստատության բուժանձնակազմի վերաբերմունքը /հարգալից է, մանրամասն քննում է, ավելորդ քաշքուկների մեջ չի գցում և այլն/ Ձեր նկատմամբ:</p> <p>1. գերազանց 2. լավ 3. բավարար 4. վատ 5. Դժվ. պատ.</p>
--	--

**18.** Ո՞րն է եղել վճարովի համակարգին դիմելու պատճառը. (ընդունել միայն մեկ պատասխան՝ ամենաառաջնային պատճառը)

1. չի վստահում պետպատվերով իրականացվող բուժման որակին, նախընտրում է վճարել  
2. պետպատվերով բուժման դեպքում բուժանձնակազմի վերաբերմունքը խտրական է  
3. վճարովի համակարգով սպասարկվելու դեպքում բուժման պայմաններն ավելի լավն են /հիվանդասենյակի կահավորանք, սանհանգույցի առկայություն և այլն/  
4. այլ \_\_\_\_\_

**Դ. ԱՆՎՃԱՐ ԴԵԴՈՐԱՅՔԻ ՍՏԱՑՈՒՄ**

**19.** Երբևէ դիմել էք անվճար դեղորայք ստանալու համար:

1. այո  
2. ոչ (անցում հարց 21-ին )

**20.** Եթե այո, ապա

1. ստացել/ում/ է կանոնավոր ՝ ունենալով խրոնիկ հիվանդություն  
2. դիմել է կանոնավոր ստանալու համար, բայց ոչ միշտ է ստացել  
3. դիմել է կանոնավոր ստանալու համար, բայց երբեք չի ստացել  
4. դիմել է կանոնավոր ստանալու համար, բայց երբեմն ստացել է փոխարինող դեղամիջոց  
5. դիմել է կանոնավոր ստանալու համար, բայց միշտ ստացել է փոխարինող դեղամիջոց  
6. դիմել/ում/ ու ստացել/ում/ է պարբերաբար  
7. դիմել է պարբերաբար, բայց ոչ միշտ է ստացել  
8. դիմել է պարբերաբար, բայց երբեք չի ստացել  
9. դիմել է պարբերաբար, սակայն երբեմն ստացել է փոխարինող դեղամիջոց  
10. դիմել է պարբերաբար, բայց միշտ ստացել է փոխարինող դեղամիջոց  
11. 1 անգամ դիմել ու ստացել է  
12. դիմել է 1 անգամ, սակայն ստացել է փոխարինող դեղամիջոց  
13. 1 անգամ է դիմել , բայց չի ստացել  
14. այլ \_\_\_\_\_

**21.** Եթե ոչ, ապա ո՞րն է պատճառը.

1. նման անհրաժեշտություն չի եղել  
2. չի հավատում, որ անվճար դեղորայք կարող է ստանալ  
3. այլ \_\_\_\_\_

**22.** Հարցերին պատասխանեց .

1. հաշմանդամն ինքը 2. հաշմանդամի \_\_\_\_\_

**Այլ մեկնաբանություններ**

---

---

---